

ԼԵՈՆԻԴ ՀՈՐԼԱՉ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԲՆԱՆԿԱՐ

Էջմիածնում թևածում են
Զանգակները փոխասաց՝
Դի՛ն-դի՜ն, դի՛ն-դի՜ն...

Զվարթ, առույգ,
Ինչպես ճժույգ,
Թռչում, ընկնում են դաշտերը,
Ու զնգում են սմբակները՝
Դի՛ն-դի՜ն, դի՛ն-դի՜ն...

Տաճարն ի վեր,
Դարեր, դարեր
Խնկաբույր երգն է հնչում,
Ու զանգերն են ղողանջում՝
Դի՛ն-դի՜ն, դի՛ն-դի՜ն...

Գույներն իրար են խառնվում,
Ու ժողովուրդն է խնոնվում՝
Ունկն դրած ամեն բառին,
Աչքը՝ Վազգեն Վեհափառին:

Դի՛ն-դի՜ն, դի՛ն-դի՜ն... Հորիզոնում
Մասիսները տոն են տոնում,
Ծառ ու ծաղիկ զուգվում են վառ,
Հավքերն են ձայն տալիս իրար,
Զարն է կորչում, ծնվում բարին՝
Դարը դարին, դարը դարին:

Ուկրաիներենից թարգմանեց

ԼԵՎՈՆ ՄԻՐԻՋԱՆՅԱՆԸ